Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան

ավագ դպրոց > ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Դպրոց–ընտանիք համագործակցության ազդեցությունը կրթության եվ դաստիարակության արդյունավետության գործում*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ *ՄԱՐՏՈՒՆԻ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Գոհար Խանսանամյան

ԴՊՐՈՑ՝ *<<Երանոսի թիվ 2 մ/դ>>*

Մարտունի-2022

Բովանդակություն

1.Ներածություն.....3

2.Գրական ակնարկ.....5

3.Ընտանիք-դպրոց փոխհարաբերությունը.....7

4.Ծնողի ներգրավվածության նշանակությունը.....12

5.Եզրակացություն.....17

5.Գրականության ցանկ.....19

1.Ներածություն

Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են:

Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել:

Հետազոտական աշխատանքի գլխավոր նպատակն է տալ հետևյալ հարցի պատասխանը.

Ինչպե՞ս սերտացնել ընտանիք – դպրոց համագործակցությունը, որ համատեղ աշխատանքը ունենա իր դրական արդյունքը, գտնել փոխգործակցության ուղիներ, եղանակներ և ձևեր:

Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի , երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով:

Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պլանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով , ինչպես նաև այն հանգամանքով , թե վերջիններս , ըստ իրենց իմացական կարողությունների , հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են: Միաժամանակ կան հիմնախնդիրներ. որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այդպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ:

Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, դրանց փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը: Դպրոցի և ընտանիքի համագործակցության և փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր, թերևս երեխաների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումն է:

Մանկավարժական խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է ծայրահեղ, ու պահանջվում է արտակարգ օգնություն:

Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքն ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը: Այսպիսով մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ:

Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր

հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են

Գրական ակնարկ

Երեխայի դաստիարակությունն ու դերը ընտանիքում

Ազգը պահողն ու շարունակողը, ազգային նկարագիրն ու դիմագիծը սերնդե-սերունդ փոխանցողն ընտանիքն է: Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է, ավանդույթների, սովորույթների, մշակույթի , դաստիարակության և բազմաթիվ այլ հատկանիշների կրողն ու փոխանցողը:

Այն երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակման, կայացման հարցում: Այստեղ են դրվում երեխայի անձնավորության հիմքերը, և կառուցվում է նրա սոցիալական կերպարը:

Փոքր հասակից երեխայի կամքը, գիտակցությունը և զբաղմունքներն ուղղորդող ուժը ընտանիքն է: Այն երեխաների հուզական փոխհարաբերությունների թրծման դարբնոցն է: Երեխան իր գոյության առաջին իսկ օրից անդամ դառնում է ընտանեկան թիմի, որտեղ կիսվում են հաջողությունները, ուրախությունները, հոգսերը, կարիքներն ու տխրությունը:

Շրջապատից առաջին տպավորությունները մանկիկը ստանում է նրա ընտանիքում, ուր ձևավորվում է նրա բնավորությունը : Հարազատ ընտանեկան միջավայրում է նա ստանում հոգևոր ու բարոյական նախնական դաստիարակություն: Ծնողների օգնությամբ երեխան ձեռք է բերում կենսական հմտություններ: Ծնողներն ու ընտանիքի անդամները երեխայի առաջին և ամենակարևոր ուսուցիչների են: Նրանց դերն անկյունաքարային է և երեխայի անհատականության կայացման հարցում:

Ընտանեկան դաստիարակության գերագույն նպատակը Ընտանեկան դաստիարակության գերագույն նպատակն անհատի՝ ոչ իբրև սոսկ ֆիզիկական գոյություն, այլ որպես բարոյական հատկանիշներ ու առաքինություններ կրող անհատականություն ձևավորելու բնականոն և արդյունավետ գործընթացն է: Ծնողները սեփական օրինակով օգնում են իրենց զավակին՝ սովորելու ամենառաջնային ուկենցաղում գործածական հասկացությունները: Ի սկզբանե երեխաներն ընտանեկան միջավայրում են առնչվում այնպիսի բարոյական արժեքների, ինչպիսիք են ՝ ազնվությունը, կարեկցանքն ու ապրումակցումը: Ընտանեկան դաստիարակության շարունակականության ապահովումն էապես պայմանավորված է դպրոցի աշխատանքով: Դպրոցը չի կարող փոխարինել ընտանիքին, սակայն կարող է բարձրացնել նրա դերը դաստիարակության հարցում: Ցանկալի է , որ ընտանիքն ու դպրոցն աշխատեն նույն ուղղությամբ: Դպրոցի և ընտանիքի միջև հակասությունը բացառվում է այս հարցում: Նրանց համագործակցության կենտրոնում երեխան է , որն իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է դպրոցում և ընտանիքում: Այսօր զգալիորեն աճել է ընտանեկան դաստիարակության դերը:

Ընտանիք – դպրոց փոխհարաբերությունը

Ընտանիքի և դպրոցի ընդհանուր նպատակը

Ընտանիք – դպրոց փոխհարաբերության մեջ կողմերից յուրաքանչյուրը յուրովի պատասխանատվության է կրում մյուսի հանդեպ: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են , ինչն աշակերտի կրթության վճռորոշ գործոն է , ապա հաղթանակն ապահովված է:

Երեխայի զարգացման վրա ամենաշատը ներգործում է ընտանիքը: Մեծ մանկավարժ Ժան – Ժակ Ռուսոն նկատել է , որ ընտանիքից հետո յուրաքանչյուր դաստիարակ ավելի քիչ ազդեցություն ունի երեխայի վրա, քան նախորդը: Ա

հա ինչու է ընտանիքի դաստիարակությունն այդքան կարևոր: Իսկ դրա արդյունավետ կազմակերպմանը պետք է մասնակից լինի դպրոցը: Ես հենվում եմ ընտանեկան դաստիարակության դրական փորձի վրա ՝ օգտագործելով այն կրթության գործընթացում:

Ըստ Մակարենկոյի՝ երեխային դաստիարակում է ամեն ինչ՝ առարկաները, երևույթները, սակայն ամենից շատ մարդիկ և առաջի հերթին ՝ ծնողները:

Փոխվել է ուսուցիչ -աշակերտ – ծնող եռանկյունին: Այն մտայնությունը, թե դպրոցը չպետք է աշխատի ծնողի հետ, որ դաստիարակությունը միայն ծնողի գործն է, թյուր կարծիք է: Շատ բան է փոխվել – գնացել , բայց մնացել են ծնողն ու երեխան իրենց հոգսերով, և ուսուցիչն առավել կարիք ունի ծնողի հետ համագործակցության, որպեսզի ավելի արդյունավետ կազմակերպմակերպվի

սովորողների հետ տարվող աշխատանքը: Աշակերտի հաջողությունը դպրոցի և ընտանիքի ընդհանուր նպատակն է :

Հոգեբաններ Ա. Լ. Ժոռավլյովը, Ն. Ֆ. Ռադիոնովը գտնում են , որ երեխայի կրթությունը մի գործընթաց է, որը վերաբերում է ոչ միայն դպրոցին , այլև ընտանիքին, հետեվաբար, անհրաժեշտ է նրանց համատեղ աշխատանքը:

Դպրոցի մանկավարժի ընտանիքի հետ աշխատելու նպատակներն են՝ Օգտագործել այն հնարավորությունները, որոնք ընտանիքում դրական ազդեցություն ունեն երեխայի վրա: Բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան:

Ներգրավել նրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների մեջ: Համադրել ծնողների իրազեկվածությունը դաստիարակության գործում:

Մեր ժամանակների կարևորագույն խնդիրը

Մեր ժամանակներում կարևորագույն խնդիրը ծնողների ներգրավումն է դպրոցի գործունեության մեջ: ծնողների ներգրավածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի համագործակցության որակը: Այս գործոնի կիրառումը մեզ օգնում է պարբերաբար սպառիչ պատասխաններ ստանալ երեխայի վարքի մասին:

Ուսուցիչները մշտական և ամենօրյա կապ են հաստատում ընտանիքի հետ : Եթե ծնողները ներգրավված են սովորողների դաստիարակության գործընթացում , ապա աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ:

Ծնողների մասնակցությամբ կազմված դպրոցական միջոցառումների ծրագրերն առավել հաջողված են: Ծնողների հետ աշխատանքը կազմակեպում ենք խմբային և անհատական ձևերով: Համագործակցության հասնելու համար նախ փորձում ենք ճանաչել երեխայի ընտանիքը: Առաջին հանդիպման ժամանակ ծնողներին խնդրում եմ լրացնել հարցաթերթիկ՝ հետևյալ բովանդակությամբ.՝

1. Աշակերտի անունը, ազգանունը

2. Ծնողների անուն-ազգանունները, կրթությունը

3. Ընտանիքում որերորդ երեխան է

4. Աշակերտի սիրած զբաղմունքը

5. Ում հետ է առավել կապված ընտանիքում

6. Ծնողների նախասիրությունները

7. Երեխայի նախասիրությունները

Պարբերաբար թարմացվում են այդ տեղեկությունները:

Այս հանդիպումը շատ բան է պայմանավորում: Այդ պահին է դրվում գործարար և արդյունավետ համագործակցության անկյունաքարը: Աշխատում եմ չներկայացնել այն դժվարությունները, որոնք սպասում են ծնողին ու երեխային: Խիստ կարևոր են ծնողների հետ ընկերական – գործնական հարաբերությունների ձևաորումը և նրանց վստահության նվաճումը:

Ընտանիք-դպրոց համագործակցությունը նպաստում է , որ ուսումնառությունը յուրաքանչյուր աշակերտի համար վերածվի ստեղծագործական միջավայրի , ստեղծվի միասնական հանրույթ՝ ծնող-աշակերտ- ուսուցիչ: Մեր դպրոցների մեծ մասում կիրառվում են ընտանիքի հետ համագործակցության ավանդական ձևերը՝ ծնողական ժողով, օրագրի վարում, հեռախոսազանգ, նամակ- գրություն: Վերջերս դրանց ավելացել է նաև էլեկտրոնային հաղորդակցությունը: Ծնողներին դպրոցական կյանքին մասնակից դարձնելը որոշակի դժվարություններ է ներկայացնում հատկապես առաջին դասարանը ձևաորելիս: Հաճախ են ծնողները պասիվ դիտորդի դեր ստանձնում: Գուցե պապճառն այն է, որ ծնողները ծանոթ չեն միմյանց և ամբողջ դասարանի աշակերտներին: Մի մասն էլ աշխատանքով ծանրաբեռնված է կամ զբաղված տնային գործերով:

Ցանկացած ծնող դաստիարակում է իր երեխային այնպես, ինչպես ինքն է համարում ճիշտ իր ունակությունների, հնարավորությունների, զգացմունքների, համոզմունքների սահմաններում: Շատերը ձեռնպահ են մնում «անհարկի» միջամտությունից: Այս ամենը պահանջում է նպատակաուղղված աշխատանք :

Մեր խնդիրն է ստեղծել ծնողական ամուր թիմ պատրաստ մասնակցելու դպրոցի կյանքին: Ես փորձում եմ շարժել ծնողների հետաքրքրությունը և շահագրգռությունը ուսումնական գործընթացին մասնակցելու առումով: Երեխայի ծնողը դառնում է իմ գործընկերը, խորհրդատուն և համախոհը: Հաճախ եմ անցկացնում ժողովներ, որոնց նպատակն է ծնողներին զինել մանկավարժական կոնկրետ գիտելիքներով:

Մեր հանդիպումները դառնում եմ կարծիքների քննարկման և գործնական առաջարկությունների ներկայացման միջոցներ: Պարզ է, խոսակցության թեման երեխաներն են: Աշխատում եմ նրանց ներկայացնել առավելապես իրենց դրական հատկանիշներով: Խուսափում եմ կտրուկ բողոքներից և բացասական որակումներից:

Չափազանց կարևոր է ուսումնական գործունեության ու դաստիարակության գործընթացների ճիշտ հարաբերակցումը և զուգակցումը:

Դրա համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որը երեխայի համար ապահովի՝

1. դրական հույզեր ու ապրումներ

2. յուրաքանչյուր օրը տոն դարձնի

Երեխային երջանիկ տեսնելու ակնկալիքով հարկավոր է մանկավարժահոգեբանական գիտելիքներ հաղորդել նաև ծնողներին՝ ապահովելով վերջիններիս դպոցի կյանքին առավել ակտիվ մասնակցությունը:

Ժամանակակից դպրոցի խնդիրները

Ժամանակակից դպրոցում խնդիր է՝

նպաստել երեխայի ուսումնական դրդապատճառների ձևավորմանը:

Հաճախ դպրոց հրավիրել ազատամարտիկ պապիկների, հայրիկների, ովքեր իրենց ներկայությամբ, կենսափորձով, հետաքրքիր պատմություններով բարձրացնում են երեխաների ռազմահայրենասիրական ոգին:

Ուշագրավ մասնագիտությունների տեր, շնորհալի ծնողները, մնջախաղի դերասան, հագուստի մոդելավորող վարպետության դասեր են տալիս մեր աշակերտներին: Ցուցադրվում են նմուշներ հետաքրքիր հավաքածուներից: Այս ամենը կատարվում է ուսանելի դասանյութին համապատասխան, համաձայն նախապես մշակված պլանի:

Կարևոր խնդիր է մտերմացնել ծնողներին և երեխաներին: Իրենց ծնողների տեսնելով դպրոցական առօրյայում ներգրավան ՝ երեխաներն իրենց առավել կարևոր մարդ են զգում, և բարձրացնում են նրանց ինքնավստահությունը: Ընտանիքի և դպրոցի բարեկամական , ստեղծարար հարաբերություններից շահում են բոլոր երեխանները: Երեխաները ոչ միայն մեր ապագան են այլ նաև անցյալը: Հիշենք , թե ինչպիսին ենք եղել մենք նրանց տարիքում: Դա կօգնի ավելի լավ հասկանալու երեխային:

Ծնողների ներգրավվածության նշանակությունը

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում:

Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական

ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ հավատ:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա: Ստորև քննարկում ենք յուրաքանչյուր խմբի օգուտը:

Օգուտ աշակերտին

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում,, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

- Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի.
- Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.
- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.

- Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.
- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.
- Տարբեր միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը.

Օգուտ ծնողին

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար:

Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները:

Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը. Ավելի է հասկանում սեփական որդուն.

- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.
- Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ որդու հանդեպ և ավելի շատ է գնահատում որդու ձեռքբերումները.
- Դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին.
- Ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս.
- Ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը.

- Ավելի առաջադիմորեն է օգտագործում այկևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և որդու կարիքների բավարարման համար.
- Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները:
- Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ:
- Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնխնդիրները լուծելու նպատակով:

Օգուտ ուսուցչին

Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:

- Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ.
- Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից.
- Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին:
- Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա:

Օգուտ դպրոցին

Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա ևս.

- Դպրոցը ծնողների կողմից ավելի աջակցում ունի. Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ.

- Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել.
- Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը շատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

Դպրոցի և ընտանիքի միջև երկկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է: Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն:

Մեծ մասամբ տեղեկության հաղորդման համար արդյունավետ միջոցներ են մշակված, օր. տեղեկագրեր, կայքէջեր և դպրոցի տեղեկատվական վահանակներ, որտեղ համապատասխան նյութեր/ուղերձներ են տեղադրվում: Հաճախ դպրոցներում մշակված են նմանատիպ մեխանիզմներ ծնողների ակտիվ հետադարձ կապի ապահովման նպատակով:

Որոշ դպրոց ձգտում է ծնողների ներգրավվածությունը ծնողի աչքով քննարկել: Օր. կարելի է կազմակերպել ծնողական ժողովներ և սեմինարներ ոչ թե դպրոցում, այլ ինչ որ տեղ՝ հարևանությամբ, դպրոցի շատ աշակերտների բնակատեղին մոտ: Դպրոցից դուրս ժողովների անցկացումը կնպաստի ծնողների և դպրոցի միջև լարվածության վերացմանը:

Մանկավարժները պետք է խրախուսեն ծնողներին, նրանց տեղեկացնեն, թե ի՞նչ է կատարվում երեխայի կյանքում, խոսեն այն ընթացիկ պրոցեսների մասին, որոնք կարող են ազդեցություն գործել դպրոցում երեխայի առաջընթացի վրա: Հանրակրթական հաստատությունը հստակ տեղեկություն պետք է հաղորդի ծնողներին սպասվող արդյունքների մասին, դպրոցի պլանավորած միջոցառումների, գոյություն ունեցող կարգապահական նորմերի, գնահատման գործիքների և դպրոցի նպատակների մասին:

Տնօրենը և ուսուցիչը ծնողների հետ դրական հաղորդակցման կանոնավոր գրաֆիկ պետք է կազմեն:

Դպրոցը պետք է ապահովի ծնողների հետ առաջին շփման դրական լինելը և այդ ժամանակ պետք է նկատի առնվի լեզվական խոչընդոտը և մշակույթային տարբերությունը: Երբ ծնողի և դպրոցի հաղորդակցումը կանոնավոր և արդյունավետ է, աճում է ծնողների ներգրավվածությունը, նրանց կողմից դպրոցի գնահատումը բարձրանում է և ձևավորվում է դպրոցի նկատմամբ դրական կապվածություն:

Եզրակացություն

Ծնողը պետք է ունենա մեծ ցանկություն ու կամք, իսկ դպրոցները պետք է աշխատակցեն նրանց հետ, որպեսզի դպրոցն ու ընտանիքը ունենան միանման սպասումներ ու օժանդակեն ուսման գործընթացին: Հետազոտությունները ցույց են տվել , որ դպրոցները, որոնցում ծնողների ընդգրկվածության արդյունավետ ծրագրեր գոյություն ունեն, ստացան բազմաթիվ դրական արդյունքներ, ինչպիսիք են.

- Հաճախության բարելավում;
- Բարձր առաջադիմություն,
- Աշակերտների լավ վարք;
- Ծնողների վստահության բարձրացում դպրոցի ու ուսմոն նկատմամբ:
- Աշակերտներին օգնում ու մոտիվացնում են սովորել այնպիսի միջավայրում, որտեղ ծնողներին.
- Ընդունում են ընկերաբար, հարգում ու գնահատում:
- Համարվում են գործընկեր երեխաներիուսման ու զարգացման գործում:
- Ունեն բազմաթիվ հնարավորություններ ընդգրկվելու դպրոցի գործունեությանը:
- Մշտական շփում ունի դպրոցի անձնակազմի հետ:

Դպրոցը տալիս է օգտակար տեղեկատվություն, ինչը նպաստում է նրանց ընդգրկվածությանը: Ծնողներ արդյունավետ ընդգրկվածության ծրագիրը , որն իրականացնում է դպրոցը, պետք է ընդունի ծնողի դերի կարևորությունը:

Երջանիկ է այն երեխան, ով ապրում է լիարժեք ընտանիքում, ունի լավագույն դաստիարակ կամ ուսուցիչ: Համոզմունքի ձևավորում, որ ընտանիքն արժեք է, այն պետք է կառուցել փոխադարձ հարգանքի և հոգատարության հիման վրա: Ծնողներին հասցնել այն գիտակցությանը, որ ամուր կապ ունենալու համար պետք է և՛ ընտանիքում, և՛ դպրոցում լինեն փոխադարձ սեր, հարգանք, ջերմություն, համատեղ աշխատանք:

Ուսուցիչ, աշակերտ, ծնող համագործակցությունը եղել է, կա և կմնա ուշադրության կենտրոնում, որի ճիշտ կազմակերպման հիմնական պատասխանատվությունը կրում է ուսուցիչը:Այս խնդրի լուծումը ուսուցիչներից պահանջում է լինել գիտակ,անաչառ, ունենալ ճկուն միտք և ընտրել աշխատանքի կազմակերպման ճիշտ մեթոդներ և հնարներ նպատակին հասնելու համար:Որպեսզի նպաստենք կրտսեր դպրոցական երեխաների ֆիզիկական, մտավոր, հոգեբանական, սոցիալական և գիտական կայուն զարգացմանն ու աճին:

Ծնողներին դարձնենք մանկավարժական գործընթացի ակտիվ

մասնակիցներ՝ օգնելով նրանց երեխաների դաստիարակության և կրթության համար պատասխանատվության իրականացման գործում:

Ծնողներին ներգրավենք ուսումնադաստիարակչական գործընթաց,քանզի դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը մեծ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար:Փորձը ցույց է տալիս,որ աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում: Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են և ինքնավստահ:Ծնողների ներգրավվածությունը դրական անդրադարձ է ունենում նաև ծնողի, դպրոցի և ուսուցչի համար:

Հարափոփոխ մեր կյանքում հաստատուն է անհատի զարգացման մանկավարժական ճիշտ մոտեցման անհրաժեշտությունը և՛ դպրոցում , և՛ մանկապարտեզում , և՛ ընտանիքում: Այս եռամիասնության թեկուզև մեկ օղակի թերացմամբ չեն բացահայտվի երեխայի զարգացման հաջողություններն ու թերությունները: Տրված էր կարճ ժամանակահատված Հետազոտական աշխատանք իրականացնելու համար: Ուստի և հնարավոր է որոշակի թերություններ կամ բացթողումներ: Եթե տրված լիներ ավելի լայն ժամանակահատված կկարողանաի առավել շատ փորձարարական դասեր իրականացնել, իսկ վերջնարդյունքը կլիներ առավել լիարժեք և գոհացուցիչ:Այնուամենայնիվ համարում եմ, որ այս սեղմ ժամանակահատվածում կարողացա իրականացնել իմ առջև դրված խնդիրը:

Գրականություն

1. Ա. Ա. Սեդրակյան, 《Ընտանիքի հոգեբանություն》

2. Ա. Նալչաջյան, 《Ընտանիքի հոգեբանություն》

3. Ցու. Ա. Ամիրջանյան, Ա. Ա. Սահակյան, 《Մանկավարժություն》, Երևան, 2005թ.

4. 《Մանկավարժական միտք》 ամսագիր, 2014թ. (1-2)

5. 《Ընտանիք և դպրոց》, 2011-3, 2013-2, 2013-5, 2014 (1-2)

6. 《Մանկավարժություն》 ամսագիր, 2009 (1-2)

7. 《Նախաշավիղ 》-6, 2009թ. 《Նախաշավիղ》